որ երբեմն ծուխ էր Ս. Նշան վանքին Սուրխաթու՝ և բնակարան հայկազն իշխանին Մուղալենց, որ ըստ ձեռանէ Գենուացւոց՝ իւր զօրքերով կը պահպանէր զաւանը և զՍուրխաթ իւր վանքերով ընդդէմ այլազգեաց յարձակմանց, այժմ դերբկաց կոյտ մի մեր առջև կը ներկայացընէ։

Այժմ Թերակղզւոյս մէջ 5000 էն աւելի չեն հայկազունք, որք մեծաւ մասամբ քաղաքաց մէջ կը բնակին և առեւտրով կը պարապին. շատ Թաթարաբնակ, ռուսաբնակ և գերմանացի գեղերու մէջ ևս խանութպանք՝ մեր ազգայինք են. համեմատութեամբ բազմաթիւ են Սիմֆերոպոլի, Խարասուի և Օր-Բազարի հայկազունք։ Գիւղատէր և այգետէր հայեր ևս կան, այլ մշակ կամ գիւղացի ազգայինք բոլորն ևս գաղթած են յԵկատերինեալաւ գաւառ 1778 ին [1], ուր շինած են Նոր Նախիջևան քաղաքը, չորս կողմը հինգ մեծամեծ հայաբնակ գիւղերով. ահա 'ի տես այդ երբեմն Տաւրիացի հայկազանց՝ ելայ 'ի ճանապարհ այս տարի (1884)։

Եթէ այս մեծ գաղթականութիւնը եղած չլինէր ասկէ 114 տարի առաջ 'ի Ղրիմէ, այժմ հին յիշատակարանիս զրութեան համեմատ բիւրաւոր հայախօս ժողովուրդ մի, հազարաւոր եկեղեցեաք պիտի չէնցընէր զծովապատն Տաւրիա...։

1. Ոմանք 1776ին, այլք մի տարի վերջը կը դնեն գաղթականութեան սկիզբն. այլ մեր վերը յիշուած թուականն ստոյգ կ'երևի և համաձայն ընդ պատմութեան։